

Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման բաց մրցույթ

Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/5 հասցեում գտնվող, 10-002-0009-0059 կադաստրային ծածկագրով, 0,01216 հա, մակերեսով բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը տուրիստական կենտրոն և սպասարկման սրահ կառուցելու նպատակով, 20 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով հայտարարվում է բաց մրցույթ, որը կկայանա ս/թ հոկտեմբերի 1-ին, ժամը 15.00-ին, Ջերմուկի համայնքապետարանում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 60 000 (վաթսուն հազար) դրամ է: Հողամասը բարեկարգ է, թեքություն չունի, իրացման ենթակա կառույցներ չկան: Կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված (անջրանցիկ) մակերեսին պետք է կազմի 50 %-ը՝ փաստացի (հեռանկարային՝ 70%):

Նշված հողամասում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ:

Մրցույթի մասնակցության վճարը 20 000 դրամ է, որն անկախ մրցույթի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում:

Նախավճարի չափը՝ մեկնարկային վճարի 5%-ը, որը մրցույթի մասնակիցները մուծում են մրցույթի անցկացման օրը՝ մինչև մրցույթի մեկնարկը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել մասնակցության հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը:

Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Մրցույթում հաղթող կձանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն վարձավճար, լավագույն պայմաններ և կշռային գործակիցներով կհավաքի բարձր միավորներ:

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով ձեռք բերելու նախապատվությունից:

Կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի նախագծին և ճարտարապետահատակագծային առաջադրանքին՝ կառուցվելիք շինության թույլատրելի հարկայնության, հատկացվող հողամասում դրա մոտավոր տեղադրման, կառուցապատման տոկոսի, շինարարության սկզբի և ավարտի ժամկետների. ինչպես նաև տարածքի բարեկարգման, պահպանմանն ու սպասարկմանը ներկայացվող պահանջների ընդգրկմամբ, կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել +37428721217 կամ +37460747077 հեռախոսահամարներով: